են, ինք կենաց եւ մահու իրաւունք ունի նոցայ վրայ, եթէ ես այս խօսքերը իրեն զրուցեմ, շատ վատ հետեւանք կ'ունենայ նոյնիսկ աղջկանց համար:

— Այսինքն այդ Տիկինը աղջիկները խեղդել կ'ուտայ եւ մեր ձեռքը չի յանձնէր. այնպէս չէ՞:

Այս խօսքերուն Ալի պատասխան չի տուաւ եւ գետինը կը նայէր:

— Չըսե՛ս,— զրուցեց Գուրգէն,— դու էլ որ իբրեւ Տէր մեզ ներկայացար՝ նորա առաջին ստրուկն ես:

— Այո,— պատասխանեց Ալի կարմրելով,— ես չեմ ուրանար իմ վիճակս, սա աշխարհքիս վրայ աչքս բացի նա ճանչցայ ինձի տիրուհի, մայր, դաստիարակ եւ ամէն ինչ. չեմ կրնար ապերախտ լինիր

— Կ'իմանամ, շան առաքինութիւն ունիս,— ըսաւ Գուրգէն խստութեամբ,— ուրեմն ես պէտք է խօսեմ իրեն հետ:

— Անկարելի է. ինք մարդու չերեւար, կրօնասէր կին է, Մարգարէին ցեղեն իջած է:

— Ես իր կրօնքին արգելք չեմ, բայց երբ իմ ազգիս զաւկները կը տանջէ եւ կրօնափոխ կընէ, Մարգարէին ցեղեն լինիլն չարգիլէր, որ ես աս բերդը քարուքանդ ընեմ եւ մէջիններն ամէնքը սրէ անցնեմ: Եթէ զօրաւորին ներեալ է ամէն անիրաւութիւն՝ ես հիմա սա վայրկենիս ձեզմէ զօրաւոր եմ: Զրուցէ՛ իրեն թէ կամայ եւ թէ ակամայ ես հիմա ներս պիտի մտնեմ եւ իրեն պիտի խօսիմ:

— Խնդրեմ, իշխան, ե՛կ դու մի՛ խօսիր, այդ միւս ծերը իրեն խօսի:

— Լաւ՛, կ'իմանամ քու միտքդ, այնպէս թող լինի, բայց եթէ յանկարծ վտանգ մը իրեն հանդիպի՝ գիտե՞ս ի՞նչ կընեմ…